# ՆԱԽԱՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀՐԱՎԵՐ

**1-ին փուլ**

«ԱյԴի Բանկ» փակ բաժնետիրական ընկերություն, հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 13,

**Հրավերի նկարագիր՝** մասնագիտացված՝ Դրամ հաշվող, ստուգող, տեսակավորող, սորտավորող սարքերի ներկրող կազմակերպությունները հրավիրվում են նախաորակավորման՝ Բանկի ԴԳ Բաժնի սարքեիր ձեռք բերման գործընթացներում ներգրավելու նպատակով:

Սույն հրավերով սահմանված պայմաններին բավարարող մասնակիցները կընդգրկվեն «ԱյԴի Բանկ» ՓԲԸ նախաորակավորված մասնակիցների ցանկում և սույն հրավերի հրապարակման պահից մեկ տարվա ընթացքում ուղղակիորեն կկարողանան մասնակցել Բանկի կողմից իրականացվող համակարգչային սարքավորումների ձեռք բերման ծրագրերի շրջանակներում կազմակերպվող մրցույթներին:

Նախաորակավորման փուլում կընդգրկվեն բոլոր այն մասնակիցները, որոնք կներկայացնեն սույն հրավերի շրջանակներում պահանջվող բոլոր փաստաթղթերը և կբավարարեն սահմանված չափանիշներին:

Հետաքրքրված մասնակիցներից պահանջվում է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը և նշված պահանջներին համապատասխանելու վերաբերյալ փաստաթղթային հիմնավորումները՝

**Նախաորակավորման չափանիշներ և պահանջներ**

- երեք տարիների միջին տարեկան շրջանառությունը պետք է լինի 100,000,000, ՀՀ դրամ (մեկհարյուր միլիոն ՀՀ դրամ, ներառյալ հարկերը), տրամադրել կատարված աշխատանքների հիմքեր:
- առնվազն 3 տարվա փորձ և վերջին երեք տարիների ընթացքում, տարեկան 3 (երեք) նմանատիպ ապրանքների մատակարարման հաջողությամբ իրականացված պայմանագիր, ներկայացնել պայմանագրի և մատակարարված ապրանքների ընդունման ակտի պատճենները՝ պահպանելով գաղտնիության պայմանները:
- պետք է հանդիսանա իր կողմից մատակարարվող սարքավորումներ արտադրող կազմակերպության ներկայացուցիչը (պաշտոնական ներկայացուցիչ, պաշտոնական դիստրիբյուտոր, պաշտոնական գործընկեր և այլն) և տրամադրել

արտադրողի կողմից հավաստագրման թերթիկ (MAF) և տեղեկանք այն մասին, որ մատակարարվող ապրանքն արտադրված է Հայաստանի Հանրապետությունն ընդգրկող տարածաշրջանում սպառման և սպասարկման համար:

- Պետք է ունենա ՀՀ դրամի ճանաչման և ստուգման ծրագրային ապահովման լիցենզիա արտադրող ընկերության կողմից, ինչպես նաեւ պետք է տրամադրի հավաստող փաստաթուղթ, առ այն, որ ունի համապատասխան թույլատվություն իրականացնելու ծրագրային ապահովում եւ թարմացումներ առաջիկա հինգ տարիների ընթացքում: Փաստաթուղթը պետք տրամադրված լինի արտադրող ընկերության կողմից եւ հավաստված լինի տարածաշրջանային ներկայացուցչի կողմից:
- Մատակարարվող ապրանքները սպասարկող առնվազն մեկ արտոնագրված սերվիս-կենտրոնի առկայություն ՀՀ տարածքում:
- Հարկային պարտավորությունների առկայության կամ բացակայության մասին տեղեկատվություն, որը չի կարող մեկ ամսից ավել վաղեմություն ունենալ:

Նախառակավորում կարող են ստանալ մասնակից այն իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը, որոնք և որոնց սեփականատերերը կամ բաժնետերերը

- ներգրավված չեն կամ ներգրավված չեն եղել սնանկության վարույթում կամ չեն հանդիսացել սնանկության վարությում ընդգրկված իրավաբանական անձի սեփականատեր կամ բաժնետեր,
- չունեն չկատարված պարտավորություն որի գծով առկա է դատական գործ կամ հարկադիր կատարման վարույթ,
- վերջին երեք տարիներին չեն ունեցել չկատարված պարտավորություն որոնց գծով առկա է եղել դատական գործ կամ հարկադիր կատարման վարույթ,
- նրանց վերաբերյալ առկա չի եղել հարուցված քրեական գործ կամ հարուցված քրեական գործը չի ավարտվել արդարացնող ակտով:

**Փաստաթղթերի ներկայացման կարգ՝**

Փաստաթղթերը ներկայացվում են էլեկտրոնային տարբերակով բացառապես procurement@idbank.am էլեկտրոնային հասցեին ուղարկելու միջոցով՝ նշելով «ՆԱԽԱՌԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏ Դրամ հաշվող, ստուգող, տեսակավորող, սորտավորող սարքեր»:

Հարցերի դեպքում դիմել՝ Սոնյա Ղևոնդյանին՝ հեռ. 093 04 08 08, 096 06 00 95

**Ներկայացման լեզու՝** հայերեն,

**Ժամկետ՝** 10/01/2025թ.:

**2-րդ փուլ**

«ԱյԴի Բանկ» ՓԲԸ նախարակավորումը ստացած անձանց՝ ԱյԴի Բանկ ՓԲԸ կողմից տարվա ընթացքում կուղարկվեն համապատասխան հիմքեր, աշխատանքների կատարման վայր Ատեխնիկական բնութագիր ներառող հարցումներ՝ գնային առաջարկ ներկայացնելու համար:

**ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ** պարունակող փաստաթղթերը ներկայացվում են ծրարավորված, որը պետք է լինի սոսնձված և կնքված այն ներկայացնողի կողմից: Ծրարը և Մասնակցի կազմած փաստաթղթերը պետք է ստորագրված լինեն կազմակերպության ղեկավարի կամ վերջինիս լիազորված անձի կողմից:

Առաջարկվող գինը ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի պետք է ներառի փոխադրման (Բանկի գլխամասային գրասենյակ), ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը:

**ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԾՐԱՐԸ** Ներկայացնել բացառապես Սոնյա Ղևոնդյանին (կոնտակտային տվյալներ՝ հեռ 093 04 08 08; 096 06 00 95)